ՂՈՒԿԱՍ ՊԱԼԴԱՂԱՐՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ «ԱՐՇԱԼՈՒՅՍ ԱՐԱՐԱՏՅԱՆ» ԹԵՐԹԸ

ՄԻՔԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Հայուստ ու բովանդակալի է Ղուկաս Պալդաղարյանի (1810—1878) կյանքը, որ նույնական է նրա երախայրիքի՝ «Արշալույս արարատյանի», անցած ուղու և պատմական արժեքի հետ։ Մոտ քառասուն տարի՝ 1840—1878 թթ., նա խմբագրել ու տնօրինել է իր հիմնած թերթը՝ միայնակ կրելով հրատարակության, տարածման ու պահպանության ամբողջ ծանրությունը։ Իր թերթի գլուխը կազմելով, նա մասնակցել է Զմյուռնիայի գաղթօջախի հասարակական կյանքի բոլոր անցուգարձերին, գաղթաշխարհի, մանավանդ Կ. Պոլսի կարևոր իրադարձություններին՝ կայուն հետևողականությամբ ու տասնամյակներ շարունակ վարելով իր սեփական ուղեգիծը, այս կամ այն չափով ներգործելով տեղի ունեցող դեպքերի ընթացքի վրա։

Միաժամանակ, որպես հասարակական գործիչ, Պալդաղարյանը գործնական դեր է խաղացել զմյուռնահայ մշակութային կյանքում. երկար տարիներ եղել է գաղթօջախի Մեսրոպյան և Սարգսյան (ապա՝ Հռիփսիմյան) վարժարանների հոգաբարձուն, և նրա տնօրինությունը զուգադիպում է ուսումնական այդ հաստատությունների առավել ծաղկման ժամանակաշրջանին։ Պալդաղարյանի նախաձեռնությամբ է ստեղծվել ու նրա ատենապետությամբ է գործունեություն ծավալել տեղի Սյունյաց ընկերությունը, որը մշակութային իր բեղմնավոր նախաձեռնումներով մեծ համբավ է թողել։

Մեր բանասիրությունն ու պատմագիտությունը քիչ չեն անդրադարձել Ղ. Պալդաղարյանի և նրա թերթի գործունեությանը։ Թե՛ նրանց ժամանակակիցները, և թե՛ հետագա ուսումնասիրողները հակոտնյա կարծիքներ են հայտնել՝ երբեմն մի ծայրահեղությունից հակառակ ծայրահեղության մեջ ընկնելով՝ մանավանդ երբ խոսքը նրանց դավանած ուղղության մասին էր[1]։ Հիրավի, անչափելի է հակադիր գնահատականների միջև ընկած անդունդը. «Ի ծագել Արշալույս արարատյան՝ նոր կյանք կսկսի» բնութագրությունից թերթին տրված որակավորումը հասել է մինչև «ռեակցիոն օրդան» պիտակը։

Մերժելով երկու ծայրահեղությունները, հարկ է նկատել, որ գործիչ-խմբագիր Ղ. Պալդաղարյանի և «Արշալույս արարատյանի» գնահատության հարցում անպայման պետք է վերապահում անել՝ տեղի չտալով ո՛չ կողմնակալ, ո՛չ էլ թանձրացած կարծիքներին։

Ղ. Պալդաղարյանին ու նրա թերթին առավել մոտիկից ծանոթ Մ. Մամուրյանը, ճիշտ է մահվան առթիվ, բայց բավական դիպուկ է բնութագրել՝

---

[1] Տե՛ս, օրինակ, Գ. Գալեմքյարյան, Պատմություն հայ լրագրության, Վիեննա, 1895, էջ 47—58, Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1, Երևան, 1955, էջ 575—576, հ. 2, 1956, էջ 579, Ա. Ինճիկյան, Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունը, Երևան, 1980, էջ 253, 356։

«հին, բազմարդյուն, անձանձիր, խոհական ազգային խմբագրին». «Իբրև խմբագիր հայ օրագրության մեջ եզական պատկեր մ' էր և պիտի մնա միշտ իր գաղափարներովն ու իրեն հատուկ արժանիքովն։ Նա 1840-ին ավետեց ԱՐԱՐԱՏԱ ԱՐՇԱԼՈՒՅՍԸ և 38 տարի կովեցավ իր գրչով այդ արշալույսը փայլեցնելու Արարատա վրա... ամեն արգելքներ տապալելով՝ կարող եղավ հայությունը մամուլով մ' օժտել և հայոց մեջ նոր բավիղ մը բանալ հառաջադիմության, որու մեջ վերջերն ուրիշներ ալ մտան։ Բայց Թուրքիո մեջ, միայն Ղ. Գ. Պալդաղարյանի կպատկանի հայ օրագրության ռահահորդ լինելու փառքը... երբ Արշալույսն երևցավ, նոր թվական մը բացվեցավ անշուշտ հայոց համար։ Նա գրգիռ եղավ նոր նոր ընկերությանց հաստատության, նա ջանաց ուսումնասիրությունը տարածել հայոց մեջ, նա դրպրոցները պաշտպանեց և հայոց իրավունքը՝ իր փմացած կերպով։ Նա կերպով մ' առիթ եղավ մտավորական հարաբերություն հաստատելու այլ և այլ հայաբնակ երկիրներու մեջ և հայոց աչքը դեպի Էջմիածին ու Հայաստան դարձնել, որու վերաշինության իր հարմար դատած միջոցներով աջակցելու փույթ տարավ»[2]։

«Մեծ. Ղուկաս Գ. Պալդազարյան» խորագրով մահախոսականի հեղինակ Մ. Մամուրյանը, իր «խմբագրական պարտքը» կատարելիս, հատկապես շեշտում է «գրեթե կես դար առաջ» հայ խմբագրի առաջ ծառացած դժվարությունները՝ պարբերական հիմնելու անկարելիությունը, իշխող տգիտությունն ու նախապաշարումները, ազատ մտածողության դեմ ելնող բռնավորությունը, ամիրայական ու կղերական վարք ու բարքը, նույնիսկ զուտ տպագրական գործի կազմակերպման խոչընդոտները։ Մ. Մամուրյանը թափանցիկ ակնարկով է ավարտում իր դամբանականը. «Հայ օրագրության պատմությանը կվերաբերի Արշալույս արարատյանի խմբագրական ներգործությունն ու գաղափարաց ուղղությունը քննել և ճշգրիտ հետևություն մը հանել»։

Պատվիրանի պես հնչող այս խոսքերն այժմ էլ չեն կորցրել իրենց իրավացիությունը։ Դեռևս ուսումնասիրված չեն «Արշալույս արարատյանի» հաստածավալ հավաքածուն, նրա խմբագրի հայացքները, չկա քիչ թե շատ հիմնավորված ամբողջական գիտական կարծիք նրանց գործունեության մասին, թեև շատ ու շատ հաճախ է շրջանառության մեջ դրվում երկարամյա թերթը՝ իր օգտակար ու արժեքավոր նյութերով։

Մեր անդրանիկ ազգային լրագիրը, արտահայտելով իր խմբագրի մեկընդմիշտ որդեգրած դավանանքը և միջամուխ լինելով հայոց կյանքի առանցքային խնդիրներին, պարբերաբար հակադրվել, բանավիճել, երբեմն էլ հարձակումներ է գործել երևան եկող հանդեսների ու թերթերի դեմ՝ ամեն անգամ ստանալով պատասխան հարվածներ, ենթարկվելով երբեմն լուրջ, իսկ ավելի հաճախ՝ կողմնակալ, բայց սուր քննադատության։ Անտեսել դրանք ճիշտ չի լինի, ինչպես և անհնար է անքննի ընդունել և հիմք դարձնել դրանք դրական կամ բացասական գնահատության համար։

Ղ. Պալդազարյանը բավականաչափ հետևողական ու կայուն, մամուլին նվիրված ու իր դավանանքում անկոտրում խմբագիր էր։ Եթե ներելի է այս-

---

2 «Արևելյան մամուլ», 1878, հունիս, էջ 65—66, Վ. Զարդարյան, Հիշատակարան, հ. 3, Գահիրե, 1934, էջ 14—15։

պես արտահայտվել, նրան կարելի է բնութագրել որպես օբյեկտիվ սուբյեկտիվիստ. ի սկզբանե նա ձգտել է օբյեկտիվ դիրք գրավել այն ամենի նկատմամբ, ինչ տեղի ուներ և պետք է արտացոլվեր իր թերթում։ Այդ մոտեցումը նրան հասցրել է օբյեկտիվիզմի, որի հետևանքով էլ հիմնականում պասսիվ վերաբերմունք է հանդես բերել հասարակական կյանքի երևույթների ու իրադարձությունների նկատմամբ, փաստորեն արձանագրել է դրանք՝ դիտելով իբրև հավուր պատշաճի տեղի ունեցող անցքեր. նա իրականությունը, կյանքն ընդունել է այնպես, ինչպես գոյություն ունի։ Մյուս կողմից՝ նրա սուբյեկտը՝ անձը, ներկա է նրա թերթի գրեթե յուրաքանչյուր համարում, նույնիսկ ոչ մեծ խմբագրական ծանոթագրություններում։ Այս իմաստով հայտիվ թե քիչ թե շատ կարևոր երևույթ վրիպած լինի նրա տեսադաշտից ու գնահատող գրչից։

Մշտապես հետևելով ոչ միայն ազգային ներքին կյանքին, այլ նաև միջազգային իրադարձություններին, նա դրանց մասին հաղորդումները օտարերկրյա մամուլից քաղում ու զետեղում էր թերթում, երբեմն հատուկ հավելվածներում՝ գերազանցապես հանդես գալով որպես լրաքաղ, բայց և հաճախ էլ շիտ-շիտակ հաղորդում էր իր կարծիքը։ Թուրքիայի սահմաններից դուրս լույս տեսնող մամուլը Պալդաղարյան խմբագրի գլխավոր աղբյուրն էր։ Գաղթօջախների ընթերցողները կարոտ էին այդ լուրերին և նրանք կապվել էին թերթի հետ։ Հիմնականում այդքանով էլ սահմանափակվում է դրանց արժեքը, թեև կարևոր է և այն, որ ինֆորմացիոն այդ նյութերը որոշակիորեն ընդլայնել են գաղթահայության քաղաքական հետաքրքրությունների շրջանակը, մտքեր հարուցել ու ներգործություն ունեցել, նաև երևան հանել խմբագրի մոտեցումը, որ գերազանցապես պայմանավորված է այն մամուլով, որից նա օգտվում էր։ Առանձնապես ուշագրավ են Ջ. Դարիբալդիին (1807—1882) ու նրա գլխավորած՝ Իտալիան «ցածից» ազատագրելու շարժմանը նվիրված նյութերը, որոնք «Արշալույս արարատյանի» արտաքին լուրերի տեսությունների լուսավոր էջերն են։ Դրանցից կարելի էր եզրակացնել, թե թերթը համակրանք է տածում ազգային-ազատագրական շարժմանը, բայց դրան խանգարում է այդ մտայնությունը ցուցահանող ինքնուրույն նյութերի սակավությունը. «վտանգավոր» թեմա էր դա «Արշալույս արարատյանի» համար և նրա խմբագիրը պտտել է նրա շուրջը՝ վախենալով մերձենալ։

Այսպիսով «Արշալույս արարատյանը» միջին գծից այն կողմ չի անցել և նրանում տեղ գտած նյութերը, օրինակ, Գարիբալդիի ու նրա շարժման շուրջը, արևմտահայ դեմոկրատական պարբերականների՝ «Ծաղիկի» ու «Մեղուի», հրատարակած նյութերի ու հատուկ հոդվածների համեմատ, սոսկ փշրանքներ էին։

Եթե չափազանցությանը տուրք չտանք, ապա պիտի նկատենք, որ արտաքին կյանքի իրադարձություններին նվիրված նյութերն առհասարակ, որքան էլ դրանք մեծ տեղ են գրավում «Արշալույս արարատյանում»՝ հարմարեցվելով Ղ. Պալդաղարյանի հայեցակետին, իրենց հասարակական նշանակությամբ սոսկ հայեցողական են։ Դա վերաբերում է նաև 1848 թ. հեղափոխական իրադարձություններին[3], ֆրանսիական հասարակապետությանը,

[3] «Արշալույս արարատյան», 30 ապրիլի 1848, № 310 (այսուհետև կնշվի միայն թերթի համարը՝ տեքստում)։

Փարիզյան կոմունային (№ 906), ինչպես և միջազգային կյանքի իրադարձություններին նվիրված մեծաթիվ ու մեծածավալ մյուս նյութերին, շարտիսաների (№ 68, 310), Պրուդոնի (№ 69), Կոշուտի (№ 322, 599, 661) մասին հաղորդումներին, ստվարածավալ արտատպություններին ու թարգմանություններին։

Նույնիսկ այն դեպքում, երբ իրադարձությունների շառավիղը այս կամ այն կերպ կալիս Զմյուռնիա է հասնում, «Արշալույս արարատյանը», դրանց արձագանքելով հանդերձ, աշխատում է ավելին շասել, քան դա պահանջվում էր։ Այդպիսին է նրա դիրքը Զմյուռնիայում հայտնված «Գոսուտին ընկերնեբեն» մեկի շուրջը տեղի ունեցած դեպքերի առթիվ (№ 444, 445)։ Ավելին, նույն ուղեգիծը, փոքր-ինչ շեղումներով, թերթում պահպանվեց նաև 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին և նրա հետ կապված իրադարձությունները լուսաբանելիս, քանի դեռ նրա խմբագիրը Ղ. Պալդազարյանն էր։ Անկախ իրենց ինֆորմացիոն բնույթից, այդ նյութերը զերծ չեն ուրույն արժեքից։

Հասարակական կյանքի զարգացումը, սակայն, ընթանում էր իր օրինաչափությամբ և նրա ազդեցությունից զերծ չմնաց «Արշալույս արարատյանը», նույնիսկ ազգային-ազատագրության երազանքներում։ Նրա էջերում զգալի են ազգային զարթոնքի զարկերակի բաբախումները՝ երբեմն խնամքով քողարկված։ 1861 թ. հունիսի 3-ի համարում, օրինակ, զետեղված է Գ. Կոստանդյանի ուրույն պատգամը՝ «Ահ հայս» խորագրով։ «Տեսիլքում» «մարդկության հավերժական իրավանցը Ոգին», դիմելով «Մարտիկ Ասքանազյան» անունը ստացած տարագիր հայությանը, կոչ է անում վերադառնալ «մեծագույն և ամենալուսավորյալ մասին ծոցը», նրանից ստանալ «սնունդ, կանոն, հրաման և լույս»։ «Մարդկային Հեղափոխության Ոգու» անունից նա պատգամ է տալիս՝ «զգա իրավունքդ հօգուտ բոլորիդ» (№ 650)։ Շատ տարիներ հետո՝ 1877-ին, Հնդկաստանից «Արշալույս արարատյանին» թղթակցող Գ. Գասպարյանը թերթին հղած նույն ոգով իր նամակը վերնագրել է «Հարյուր տարուց յետ»՝ նկատի ունենալով 1975 թ.։ Նամակը ստորագրված է «Ոգին Հայաստանյայց»[4]։ Տաճատ Մասեհյանը իր չափածո խոսքում ավերակ Հայաստանի շուրթերով ազդարարում է, թե պետք է շարունակի ողբալ մինչև որ իր որդիները ուխտ կանեն «սուրբ միությամբ» հավաքվել Հայաստանում (№ 1089)։ Այսպիսի կոչերը հարազատ էին Ղ. Պալդազարյանին. նա էությամբ ազգասեր էր և նրա փափագն էր ազգի պահպանությունն ու առաջադիմությունը, մայր հայրենիքի վերածնունդը։

«Արշալույս արարատյանի» կշիռը գաղթօջախի և գաղութահայության կյանքի լուսաբանման մեջ է, որով և նա ստացել է սկզբնաղբյուրի արժեք։ դարձել տարեգրությունն այն ամենի, ինչ տեղի է ունեցել Զմյուռնիայի, հայտնի չափով նաև աշխարհի ձագերում տեղակայած հայ զանգվածների հասարակական զարգացման ընթացքում։ Այդ իմաստով Ղ. Պալդազարյանի

---

4 Նկատենք, որ «Արշալույս արարատյանը» պրոպագանդել է Ճ. Արամյանի «Ոգի Հայաստանի» («Մայր Հայաստան») սիմվոլիկ պատկերը, գտնելով, որ այդ խորհրդավոր պատկերը պետք է տեղ գտնի հայկական ամեն մի ընտանիքում։ Այս կապակցությամբ տե՛ս մեր հոդվածը՝ «Գարուն», 1980, № 9, էջ 85—89։

թերթը մի շտեմարան է, որից կարող է նյութ քաղել հայ հասարակական կյանքի ուզածդ բնագավառի հետազոտողը։

«Արշալույս արարատյանը» միայն ղմյուռնահայության թերթը չէր. նա իր ժամանակաշրջանի համար բացառիկ տարածում էր գտել և ուներ թղթակցողների բավականին լայն շրջանակ. Հնդկաստան, Ավստրալիա, Իրան, Ռուսաստան, Անգլիա, Ֆրանսիա, Շվեյցարիա, Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Իտալիա, Եգիպտոս, Լիբանան, Թուրքիա (որի 13 հայաշատ օջախներում թերթն ուներ իր բաղմաթիվ բաժանորդները)—ահա ոչ լրիվ թվարկումն այն երկրների, որտեղ ստանում էին թերթը և որտեղից մեկ կամ մի քանի մտավորականներ աշխատակցում էին նրան, գրում գաղթօջախների անցքերի ու կարևոր իրադարձությունների մասին։ Թերթը, իրոք, դարձել էր աշխարհով մեկ սփռված հայ զանգվածներին իրար հետ կապող, իրար ներկայացնող միջոց, նաև հայ կյանքը գաղթօջախներում աշխուժացնելու, մշակույթը զարգացնելու լուրջ խթանիչ։ Նա ակնկալում էր, որ այդ մերձեցումը «բարեկամություն և միություն կծնանի» (№ 576)։

Իբրև գաղթօջախների պատմության սկզբնաղբյուր, «Արշալույս արարատյանի» նշանակությունն արտակարգ մեծ է։ Այսօր նրա շնորհիվ է հնարավոր դառնում քիչ թե շատ ամբողջական գաղափար կազմել հնդկահայ խոշոր գաղթօջախների այդ շրջանի կյանքի մասին։ Բավականաչափ շատ են Ռումինիայի, Բաքվի, Շուշիի, Եգիպտոսի, Իրանի և այլ երկրների ու քաղաքների հայկական օջախների մասին նյութերը։ Հատուկ ուշադրության են արժանի թերթի կապերը Ցյուրիխի հայ ուսանողների, Նոր Ջուղայի, Կովկասի, Ռուսաստանի, Մելբուռնի հայության հետ։

Մեծ է «Արշալույս արարատյանի» և նրա խմբագրի ծառայությունը արևմտահայ գրական լեզվի հաստատման ու մշակման-հարստացման գործում։ Լինելով Հովհ. Վանանդեցու աշակերտը և Ա. Փափազյանի մտերիմը, Ղ. Պալդազարյանը եղել է աշխարհաբարի կայուն կողմնակիցներից մեկը։ Նա իր թերթը ի սկզբանե հրատարակել է գրական արևմտահայերեն, որը տասնամյակներ շարունակ այդ պարբերականի էջերում մշակվել-հղկվել է. կերտվել են բառեր, տերմիններ, որոնք քաղաքացիություն են ստացել, ստեղծվել է լրագրական ոճ, որ հասկանալի էր շարքային ընթերցողին։ Դեռ աշխարհաբարի համար մեծ պայքարը սկսվելուց առաջ, թերթի էջերում արծարծվում էին գրական միասնական ու կանոնարկված լեզվի հարցերը։ 1841-ին «Արշալույս արարատյանի» խմբագիրը ցավով արձանագրելով, որ «Ազգարար բյուզանդյանը» հայերեն հրատարակվելուց հետո, բաժանորդներ շահելու հույսով այնուհետև լույս է տեսնելու հայատառ տաճկերեն, նկատել է. «Հիրավի, մենք ալ գիտենք, որ հասարակության մեծ մասը հայերենի տեղեկություն չունենալով... ավելի կախորժի տաճկերենը, բայց մեր ջանքը աս պիտի ըլլա, որ կրցածնուս չափ աշխատինք աս անվայել սովորությունը անհետ ընելու մեր ազգին միջեն... շատ հույս ունինք, որ քիչ քիչ ամենուն ընտանի կըլլա մեր աշխարհաբառ լեզուն...» (№ 15)։ Ըստ որում, թե՛ Ղ. Պալդազարյանը, թե՛ նրա թերթին աշխատակցող շատ մտավորականներ հետևողականորեն առաջ էին տանում գրաբարը ևս ուսուցանելու և անպայմանորեն «ապրեցնելու» գաղափարը, պաշտպանում էին և՛ աշխարհաբարը, և՛ գրաբարը։ Թերթում մշտապես տպագրվում էին գրաբար ստեղ-

ծագործություններ ու վավերագրեր, իսկ Հնդկաստանից և մի քանի այլ վայրերից նրան աշխատակցում էին միայն գրաբար։

«Արշալույս արարատյանի» աշխատակիցներից մեկը Ղ. Պալդազարյանի մասին նկատել է, որ նա թերթը լույս ընծայելու «օրեն ի վեր յուր սկզբունքը չէր փոխած երբեք» (№ 1093)։ Այդ սկզբունքը պահպանողականությունն էր, որին նա հավատարիմ մնաց այնքան հարազատորեն, որքան թելադրում էր հասարակական միջավայրը, զմյուռնահայ իրականությունը, մանավանդ իր թերթի պահպանության հոգսը։ Հազիվ թե որևէ հարցում Պալդազարյանն առաջ է անցել իր ժամանակից, ինչպես և հազվադեպ է փորձ փորձել քայլել ժամանակի անկասելի առաջադիմության հետ։ Ավելի ճիշտ կլինի ասել, թե նա ինչ նպատակներով սկսել ու խնդիրների ի սպաս է գրել իր թերթը, նույնին գրեթե անդավաճան հետևել է ամբողջ կյանքի ընթացքում, թեև երբեմն գանգատվում էր, թե «լուսավորյալ դարուս պահանջած առաջադիմությունը և բարեկարգությունը չեմք տեսներ ամենևին» (№ 565)։

Ըմբռնելով ազգային միասնության պահպանության կենսական կարևորությունը, նա այդ ելակետից էլ դեմ էր ազգության ներսում տեղի ունեցող ամեն մի պայքարի, կոչ էր անում խաղաղվել, միաբանվել, խոհական ընթացք վարել։ Այս դիրքից էլ նա 1840—1860-ական թվականներին մերժում էր գործնական քննադատությունը, բայց կողմ էր երևույթի քննադատությանը։ Պալդազարյանն ակամա և հազվադեպ է փորձել վեր հանել այս կամ այն գործչի պակասությունը, սակայն հաճախ է հակադրվել ազգային մամուլին, երբ նա ետսահմանադրական տարիներին հետևողական քննադատություն էր ծավալում ազգային հաստատությունների ու գործիչների հասցեին։ Անկեղծ է իր՝ խմբագրի, խոստովանությունը՝ «առավելապես բարեգործությունները հոչակեցինք՝ անհիշատակ թողնելով ազգիս մեջ եղած պակասություններեն մեկ մասը։ Չեմք գիտեր, թե այսպես ընելով աղե՞կ, թե գեշ ծառայություն մը ըրինք, բայց... նպատակնիս բարին է» (№ 292)։ Նա բավարարված էր «յուր խաղաղասեր ու եղբայրասեր ընթացքով» (№ 370)։

Պալդազարյանը ցավում էր, որ ստեղծված պայմանների, ավելի ճիշտ, դրանց չգոյության հետևանքով հայերեն պարբերականները «հետզհետե կսկսին նվազիլ» (№ 669), բայց և ազգավնաս էր համարում տարբեր պարբերականների միջև ծավալվող վիճաբանություններն ու բանակռիվները։ Ազգային լրագրերը և հանդեսները, նկատում էր նա 1862 թ. հունիսին, «ազգին մեջ խռովությունը, երկպառակությունը և ամեն կերպ գրգռությունը հաստատուն պահելու գործիք մը եղած են և ազգայնության կեղծ անվամբ ազգատեցության գործքեր կկատարեն» (№ 672)։ Ընկալելով հայ հասարակական մտքի զարգացման բուն էությունը և տեղի ունեցող գաղափարական պայքարի անհրաժեշտությունն ու անխուսափելիությունը, նա այնքան հեռու գնաց, որ ոչ միայն քննադատությունը «քաղցրությամբ ու սիրով», «զգուշավոր գրվածքով» ծավալելու կոչ արեց, այլև Զմյուռնիայից համերաշխվեց Կ. Պոլսի առաջադիմական-դեմոկրատական հայ մամուլի և խմբագիրների դեմ ձեռնարկվող քայլերին, ձայնակցեց ազգային վարչության ու պատրիարքական սպառնալիքներին, նույնիսկ որոշ դեպքերում հակադրվեց «Մեղուին» ու Հ. Սրվանձյանին (№ 640, 650, 716, 738, 762 և հետո)։

Եվ սա այն դեպքում, երբ «Արշալույս արարատյանն» իր էջերից «Մեղուն» բնութագրում էր որպես «քաջալերության արժանի» պարբերական՝ «յուր ազգօգուտ հոդվածոցը, բարոյական խրատուցը և ազատ խորհրդածությանցը համար» (№ 575)։

Ակնառու մի երկդիմություն կա այն նյութերում, որոնք հրատարակվել են «Արշալույս արարատյանում» ընդդեմ հայ առանձին պարբերականների։ Թերթը, նրա խմբագիրը խուսափում էին բացահայտ հանդես գալ նրանց սկզբունքների դեմ։ Այդ նյութերի ընդհանուր ոգին նեգատիվ է. նրանք ստվեր են ձգում թե՛ «Արշալույս արարատյանի», թե՛ նրա խմբագրի վրա, օբյեկտիվորեն նպաստ էին բերում առաջադիմական մամուլի դեմ մղվող պայքարին, մասնավորապես Նալբանդյանի հակառակորդների ջանքերին։

Ընդգծելով այդ, միաժամանակ պետք է դիտել, որ «Արշալույս արարատյանը» ավելի շատ գնում էր դեպքերի ետևից, տուրք էր տալիս իր համար հեղինակություն դարձած պարբերականներին ու գործիչներին (Հովհ. Ցամուռճյան, Գ. Այվազովսկի, Հ. Կոճիկյան, Մ. Մսերյան) և նրանց «օգնությամբ» էր կողմնորոշվում այս կամ այն կոնկրետ դեպքում։ Ղ. Պալդազարյանի համար բնորոշ է, օրինակ, այն դիրքը, որ նա ցուցաբերել է Մ. Նալբանդյանի նկատմամբ. «Արշալույս արարատյանի» խմբագիրը մինչև վերջ էլ չհասկացավ ու չճանաչեց Նալբանդյանին, չեղավ նրա համոզված հակառակորդը, բայց և շատ հեռու էր նրա համակրողը լինելուց։ Հատկանշական է, որ սեփական կարծիք թերթը և նրա խմբագիրը մինչև վերջ էլ չկարողացան կազմել։ Նալբանդյանի մասին թերթը 1867-ի նոյեմբերի 21-ին գրել է, թե «ոմանք անոր գործքերը, զորս հայրենասիրական կհամարեն, մինչև երկինք կբարձրացնեն, ուրիշները կըսեն, թե չարագործ և խռովահույզ անձ մըն էր նա... յուր մահվանեն հետև» նույնպես (№ 819)։ Այդ տարակուսանքը իր թերթում հրապարակ հանելուց առաջ, հուլիսի 8-ին Պալդազարյանը հարցում էր արել Մոսկվա՝ Մ. Մսերյանին՝ «աղաչեմ ծանուցանել ինձ համառոտիվ, թե զինչ են կարծիք ձեր ղհանգուցյալ Միքայելե Նալբանդյանց»[5]։ Պատասխանը չի ուշացել, և «արժանահավատ մարդու» նամակից Նալբանդյանին դատապարտող հատվածը մեջբերելով, Պալդազարյանը նկատել է, թե նյութերը հրապարակում է առանց իր «կողմանե դատողություն մի հավելցնելու... մեր դատողությունը կրնա սխալած ըլլալ» (№ 819)։

Սա Ղ. Պալդազարյանի, այսպես ասած, վերջին ինքնուրույն խոսքն էր Մ. Նալբանդյանի մասին[6]։ Շատ բան նրան, իրոք, հայտնի չէր, շատ բան էլ,

---

[5] ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ՝ Մատենադարան, Մսերյանի արխիվ, թ. 205, վ. 1170։

[6] Նկատենք, որ սկզբնապես Մ. Նալբանդյանի վերաբերմունքը դրական էր «Արշալույս արարատյանի» և Ղ. Պալդազարյանի նկատմամբ։ Նա արձանագրել է, որ «գիտնական Պալդազարյանի» հրատարակած թերթն իր պարզ ոճով և «առողջ դատողությամբ», ինչպես և այլ անժխտելի հատկություններով «շահեցավ զսիրտ ազգին», հույս է հայտնում, որ նա կհարատևի և ուսումնասեր հասարակությունը Զմյուռնիայի «ոչ թողցե զաշխատություն քրտնավաստակ հեղինակին անվարձ»։ 1859-ին նա «պատվական և անդրանիկ օրագրից» քաղել է Մ. Թաղիադյանին նվիրված հոդվածը՝ շնորհակալությամբ վարձատրելով թե՛ նրա հեղինակ Ավետումյանին, թե՛ «պատվական օրագրին» (Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 2, Երևան, 1945, էջ 43—44, հ. 1, Երևան, 1979, էջ 295, 301)։ Սակայն հետագայում, երբ Նալբանդյանը եղավ Կ. Պոլսում, Զմյուռնիայում ու Փարիզում, մոտիկից շփվեց արևմտահայ գործիչների հետ,

որ, անտարակույս, նրան հայտնի էր, հարկ չէր համարում զետեղել իր թերթում։ Դրանով հանդերձ, նա բանից անտեղյակ, օբյեկտիվորեն մի էական ծառայություն է մատուցել Նալբանդյանին։ Հազիվհաղ ծանոթ լինելով «Հյուսիսափայլի» բուն ուղղությանը և ի սկզբանե համակրանքով վերաբերվելով Ստ. Նազարյանին, Պալդաղարյանը 1865 թ. վերջերին դիմել է իր «թղթերի մեջ հանկարծ դտած» հանդեսի 1864 թ. երրորդ ամսատետրակին, որտեղից և նոյեմբեր-դեկտեմբերին արտատպել է «Ազգային թշվառությունը»՝ հապավելով միայն 13 տողանոց մի հատված։ Ճիշտ է, արտատպությունը նա ուղեկցել է հոդվածը «սխալ և ազգավնաս» լինելու մասին քարոզող նախաբանով, հանդես է բերել «Հյուսիսափայլի» ուղղությունը դատապարտելու միտում, բայց և իր վերահրատարակությամբ մեծաթիվ ընթերցողներին է հասցրել հայ իրականության խոցերը և ազգային երևելիների ստորություններն ամենայն սրությամբ բացահայտող պամֆլետը՝ բնավ չենթադրելով, թե նրա հեղինակը Նալբանդյանն է և ոչ թե Նազարյանը, ինչպես ստորագրված էր «Ազգային թշվառության» տակ։ Դա այդ նշանավոր երկի միակ արտատպությունն է մինչև Ս. Նազարյանի, ապա և Մ. Նալբանդյանի երկերի հրատարակությունում տեղ գտնելը։

Քիչ չեն հատկանշող այն հարցեր-խնդիրները, որոնց նկատմամբ «Արշալույս արարատյանի» դիրքը դրականապես պետք է գնահատել։ Ստ. Ոս-

---

զինակցություն հաստատեց դեմոկրատ հրապարակախոսների հետ, նրա վերաբերմունքը արմատապես փոխվեց։ 1863 թ. հուլիսի 13-ին, բանտից եղբորը գրած նամակում սխալմամբ կարծելով, թե որպես Զմյուռնիայի հասարակության պատվիրակ Պետերբուրգ է ժամանել և իր եղբորը հանդիպել Ղ. Պալդաղարյանը, Նալբանդյանը «Արշալույս արարատյանը» համարել է «մի անարգ թերթ», իսկ նրա խմբագրին՝ «կաշառված», «սրիկա», «վարձկան», «թուրքական լրտես», «յուրաքանչյուր ամիս մատնություններ» անող, հայերին «դավաճանող» (նույն տեղում, հ. 4, Երևան, 1949, էջ 226—227)։

Դժվար է ասել, թե կոնկրետ ինչ փաստերի հիման վրա է այդքան արմատապես փոխվել Նալբանդյանի վերաբերմունքը թերթի և Ղ. Պալդաղարյանի նկատմամբ։ Առայժմ հայտնի չէ որևէ իրական փաստ կամ փաստաթուղթ, կամ անմիջական մի ուրիշ վկայություն, որպեսզի հնարավոր լինի հիմնավորել, թե Պալդաղարյանը լրտես-մատնիչ-դավաճան էր։ Կարելի է ենթադրել, թե Նալբանդյանը կասկածանքով է ընդունել այն լուրը, որ զմյուռնահայության պատվիրակը, իրոք, կտակի գործով է եկել Պետերբուրգ և հենց այդ առիթով էլ դիմել իր եղբորը։ Ըստ երևույթին, նա համոզված էր, թե նման պատվիրակի հայտնվելը ցարական հետաքննության հերթական փորձն է՝ որևէ կերպ գաղտնիք կորզել եղբորից և հենց իրենից, քանզի կտակի հարցով զբաղվող պատվիրակը, անշուշտ, կցանկանար հանդիպել Նախիջևանին կտակված գումարը մեծ հմտությամբ ձեռք բերած Նալբանդյանի հետ։ Այս դեպքում, հավանական է, որ նա, գտնվելով բանտային ծանր պայմաններում և ամենաթախանդիր քննության ենթարկվելով, թույլ է տվել ակնհայտ չափազանցություններ՝ իր անձնական նամակում, որի հրապարակման մասին բնավ չէր էլ մտածում։

Ինչ վերաբերում է Զմյուռնիայի հայության կողմից կտակի հարցով Պետերբուրգ ժամանած պատվիրակին, ապա դա ոչ թե «Արշալույս արարատյանի» խմբագիրն էր, այլ նրա ազգանվանակից մեծ եղբայրը՝ վաճառական Պաղտասար (Նալբանդյանի նամակում Բաղդասար) Գ. Պալդաղարյանը (1801—1874)։ Նա պատվիրակ է ընտրվել իբրև զմյուռնահայության ներկայացուցիչ և պետք է մեկներ Ռուսաստան և զբաղվեր Աբելյանի կտակով։ Այդ նպատակով էլ նա 1863 թ. հունիսի 1-ին մեկնել է Զմյուռնիայից, երկար ժամանակ բախել ցարական հաստատությունների դռները, դիմել նույնիսկ ցարին և ի վերջո դատարկաձեռն վերադարձել։ «Արշալույս արարատյանը», մինչ այդ և դրանից շատ տարիներ անց, բազմիցս անդրադարձել է այդ խնդրին՝ որևէ թթու խոսք չասելով ցարական բյուրոկրատիայի հասցեին անգամ (տե՛ս № 701, 703, 728, 814 և հետո)։

կանյանին և նրա նոր ու «համարձակ դրությանը (սիստեմ)», օրինակ, թերթը սկզբից մինչև վերջ հարգանքով և ըմբռնումով է վերաբերվել, թեև Ոսկանյանը նրա մասին խիստ ու վիրավորական ձևով էր արտահայտվում։ Կամ՝ Ազգային սահմանադրության կիրառության ժամանակամիջոցում, մանավանդ 1865—1880 թթ., պայքար է մղել գավառների, մասնավորապես Զմյուռնիայի գաղթօջախի, իրավունքների ճանաչման ու պաշտպանության համար։ Թերթը նույնիսկ սկսեց քննադատել ազգային վարչության ու ժողովների աշխատանքը, արձագանքեց հասարակության դժգոհություններին ու բողոքներին։ Կան և շատ ու շատ հարցեր, որոնք թերթն ու նրա խմբագիրը լուսաբանել են չեզոք դիրքերից, սակավադեպ կամ չուզենալով են անդրադարձել դրանց, երբեմն բավարարվել են կարևոր իրադարձությունների շուրջը ինֆորմացիոն նյութեր հրատարակելով (կրթական գործի դրվածքը, Զեյթունի 1862 թ. ապստամբությունը, ռուս-թուրքական պատերազմները և այլն)։

«Արշալույս արարատյանի» և նրա միանձնյա տնօրենի որդեդրած դավանանքի մասին գաղափար կազմելու համար ծանոթանանք նրանց առաջադրած սկզբունքներին մի քանի էական հարցերում։ Թերթի առաջին տարվա համարներում նրա խմբագիրն իր իսկ ստորագրությամբ՝ Ղ. Գ. Պ., հանդես է եկել ազգասիրությանը նվիրված դրվագային հոդվածներով։ Մեր ազգի մեջ, գրում է նա, կան մարդիկ, «որոնց համար ազգասեր չենք կրնար ըսել, որովհետև իրենց ազգը հաճախ կպախարակեն ազգակիցներուն ընկերությանը մեջ... Խելքերնիս գլուխնիս բերենք անգամ մը, եղբարք, ու բոլոր անձնական կիրքերը մեկ կողմը ձգելով անաչառապես դատողություն ընենք մեր վրան... Սակայն ազգասեր մարդը միշտ կպարտավորի իր ազգին բոլոր պակասությունները գոցել...» (№ 54)։ Բացատրելով, թե ինչու պետք է չխոսել ազգային պակասությունների մասին, նույն հարցին նվիրված իր հաջորդ հոդվածում խմբագիրը շեշտում է, թե «կպարտավորինք աղեկ մը քննություն ընելեն ետքը՝ նայիլ տեսնել ժամանակին պարագաները ու միշտ անոնց հետևելով կամակորություն (ինատ) չընել», ապա հիշեցնելով ցախավելի հայտնի զրույցը, ավելացնում է. «Եթե մեր ազգին վրա անկեղծ սեր ունենանք, թե որ անոր աղեկությունը ուզելու ըլլանք կպարտավորինք ազգին պակասությունները ծածկել ու աշխատիլ ձեռքերնես եկածին չափ քիչցնել զանոնք» (№ 57, 61)։ Հենց նույն՝ 1841 թ., եռաստող ծածկագրությամբ հրատարակված մի հոդվածում, արծարծելով անցյալի պատմության հարցերը, այդ խնդրում հանդես է բերվում մի փոքր այլ մոտեցում։ Քննելով ժողովրդի պատմության կարևորության հարցը, որ ինքնին չափազանց հետաքրքրական է, հեղինակը նկատում է, որ պատմությունը արձանագրելով հայրենասեր մարդկանց առաքինությունները, խթանում է նոր ջանքեր, մղում «ալ ավելի հայրենասեր ըլլալու»։ Դրա հետ միաժամանակ պատմության մեջ «պախարակելի կրից տեր եղողը, խռովասեր մարդիքներն ալ իրենց գարշելի պատկերը տեսնելով ազգատյացներուն վրա... կամըշնան իրենց ընթացքեն ու բարքերնին կփոխեն»։ Այսպիսով, պատմությանը հատկացվող դերը բավականաչափ կոնկրետ մեկնելով, թերթն այն դիտում է իբրև միջոց նկատվող պակասությունները «սանձելու ու քիչ-քիչ ուղղելու»

7 «Արևմուտք», 1 փետրվարի 1864, № 1, էջ 4։

համար։ Նրա էջերից իմանալով զանազան «մոլություններով» ազգին պատճառված «հազարումեկ վնասների» մասին, դրանցով տառապողը պետք է «ազգի անունցմե և հոգ տանի ազգասեր ու եղբայրասեր ըլլալու, չըլլա որ իր խոսքը առաջ տանելու ու ինքը միայն մեծ սեպվելու ետև ըլլալով՝ ազգին վնաս մը հասցունե, ու հավիտենական նախատանաց արժանի ըլլա» (№ 56)։ Այս ելակետից էլ Թերթը տպագրում էր հայոց պատմության առանձին պատմաշրջաններին նվիրված ուսումնասիրություններ (№ 73, 84, 124, 134), նույնիսկ քննադատում էր պատմագիտական գործերը (№ 121, 134, 187)։ Սակայն հայոց պատմության վկայակոչումը արվում էր նաև մի այլ նպատակով։ Թերթի հոդվածներից մեկում ուղղակի ասվում է. «Հայկին զավակ գտնվիլը մեծ բան մը չէ, դիպված մըն է. ինչո՞ւ կհպարտանաք, գործով անոր նմանիլն է մեծ բան, ուրեմն, անոր նմանողները մինակ թո՛ղ պարծին, չնմանողները թո՛ղ ամչնան» (№ 255)։ Առհասարակ Թերթը հայոց պատմության իմացությունը համարում էր ամենքի համար «անհրաժարելի պարտավորություն» և «խիստ օգտակար» (№ 84)։

Հարցի այս դրվածքը, ինքնին, առարկություն չի վերցնում։ Ինչ որ տեղ կարելի է ընդունելի համարել նաև շրջահայաց լինելու, «ժամանակին պարագաները», դրանց թվում նախ և առաջ թուրքական միջավայրը նկատի ունենալու հորդորները։ Հայության ընդհանուր վիճակով թելադրված այդպիսի հարցադրումները նաև հետևանք էին մամուլի դերի դեռևս ոչ լիարժեք, ավելի ճիշտ միակողմանի ըմբռնողության։ Այդուհանդերձ, դժվար է արդարացնել չեզոքության ուղեգծին հավատարիմ մնալու այն տևական ջանքերը, որ գործադրեց «Արշալույս արարատյանը» շուրջ քառասուն տարի։ Թերթը, նրա խմբագիրն ու աշխատակցողները չուզեցին ու չտեսան գաղթօջախի կյանքը շարունակաբար վրդովող բուն պատճառները, գրեթե պայքար չծավալեցին դրանց դեմ, աչք գոցեցին սոցիալական-քաղաքական այն իրավիճակի հանդեպ, որի մեջ գտնվում էին արևմտահայ զանգվածները։

Ավելի կոնկրետ նշենք հետևյալը. երբ ստեղծվեցին ու գործել սկսեցին ազգային հաստատությունները և դրանց անդրանիկ քայլերը դժգոհություններ ու բողոքարկումներ առաջացրին, «Արշալույս արարատյանի» խմբագիրն առաջադրեց շատ կարևոր մի սկզբունք՝ կարծես թե ազդանշելով առաջիկա շրջադարձը. «Ըստ մեր կարծյաց, սխալ և վնասակար դրություն մըն է ազգին պատիվը պահելու պատճառանոք անոր պակասությունները ծածկել և գովել իսկ անոր պարսավելի ընթացքը... Ազգային կառավարության և ազգային առաջնորդաց պակասությունները և անկարգությունները պահելով և գովելով, զանոնք մշտնջենավորելու օգնական կըլլամք։ Այլ ընդհակառակն, եթե անոնց գործքերը հրապարակով և խոհեմությամբ դատաքննվին, եթե ազգային հոգաբարձուաց և առաջնորդաց ընթացքը ի դիպվածի, որ պարսավելի են, հրապարակավ մեղադրվելու ըլլան, եթե անոնց ունեցած պատասխանատվությանը վրա անհոգություն չըլլա ազգին կողմանե, հայնժամ հավատի եմք, թե ազգային գործքերը ավելի բարեկարգությամբ, ավելի արդարությամբ և ավելի ուշադրությամբ կկատարվեն ամեն տեղ» (№ 616)։

Ազգային պակասությունների անաչառ բացահայտումը Պալդաղարյանի խոստովանությամբ «համարձակ ընթացք» է և «ամեն մարդու գործ չէ»։ Հակառակ այն բանին, որ իր Թերթում ընդգծում էր այդ ուղեգծի շահեկան անհրաժեշտությունը, նա, հազիվ մեկ տարի անց՝ 1861 թ. հունիսին, երբ

առաջադիմական-դեմոկրատական մամուլը իսկապես գնում էր այդ «համարձակ ընթացքով», հանդես եկավ լիովին հակադիր ելակետից։ Այժմ արդեն նա գտնում էր, որ «գրելու և հրատարակելու ազատության ոչ չափը ճանաչող և ոչ չափ մը դնող կա... Մեք կարծեմք թե ազգային լրագրությունները կպարտավորին իրենց փափուկ և ծանր պաշտոնը քիչ մը խոհեմությամբ ի գործ դնել... երբ հարկ կըլլա ոմանց պակասությունները և այլոց անկարգությունները հրատարակել...» (№ 650)։ Եվ «խոհեմության» այդ հորդորները թերթը տարածում էր ամեն մի քայլի վրա՝ «անցյալը մոռանալու», «ազգի երևելիներին», «պատվավոր անձանց», «հարուստ բարերարներին», «արժանահարգ եկեղեցականներին» քննադատելու, նույնիսկ ազգային սահմանադրությունը գործադրելու, ինչպես և Զմյուռնիայում նույնպես այն հաստատելու և բազմաթիվ այլ հարցերում։ Կրկին ու կրկին Պալդազարյանը շեշտում էր, «թե խոհեմությամբ, սիրով և համաձայնությամբ միայն կրնա ազգային Սահմանադրությունը հաստատ մնալ և ծաղկիլ» (№ 657)։ Իր հերթին, նա չէր դադարում «ցավալի դեպքերուն դարման տանելու» «ուրիշ խոհեմ միջոցներ» գտնելու փորձեր անել (№ 682)։

Ոչ միայն այսօրվա, այլև անցած դարի 60-ական թվականների առաջադիմական-դեմոկրատական մամուլի, Ոսկանյանի, Նալբանդյանի և Սրվանձյանի դիտակետից «Արշալույս արարատյանի» և նրա խմբագրի որդեգրած ուղեգիծը պահպանողական էր, հետադիմական և նրանք հենց այդ ելակետից են քննադատել նրանց գործունեությունը։

Եթե «Արշալույս արարատյանի» ուղեգիծը համընդհանուր ազգային հարցերում դեռևս բացատրելի է, ապա հազիվ թե կարելի է նրբացուցիչ բացատրություն տալ թերթի նույն «խոհեմ», «զգուշավոր» դիրքին գաղթօջախի ներքին կյանքի խոցերը բացահայտելու խնդրում։ Թերթի տասնյակ տարիների էջերը գաղափար չեն տալիս զմյուռնահայ աշխատավորական խավերի իրական կյանքի, նրանց հոգսերի, թուրքական իշխանությունների հալածական քաղաքականությունից կրած տառապանքի մասին (աննշան բացառությունները բնավ չեն փոխում պատկերը)։

Իրենց դավանանքից ելնելով, թերթը և նրա խմբագիրն ակտիվորեն հակադրվում էին հայոց ազգի, հայ ժողովրդի հասցեին ասվող կամ հրատարակվող ամեն մի դիտողության, բանավիճում էին հայրենական կամ օտար հրատարակությունների անճիշտ, չափազանցված կամ սխալ կարծիքների դեմ, քննադատում Մ. Չամչյանի հայոց պատմության առանձին էջերը (№ 554, 1004—1005, 1037), Մխիթարյանների որոշ հրատարակությունները (№ 121, 143, 426, 434՝ հավելվածով և հետո), Հովհ. Զամուռճյանի դրույթները (№ 335, 397, 403՝ հավելվածով — 406, 409 և հետո), թեև վերջինիս նկատմամբ որոշակի հարգանք էին տածում։

Լինելով հայոց լուսավորչական եկեղեցու ջերմեռանդ պաշտպանը, «Արշալույս արարատյանը» եռանդուն պայքար է մղել պապականության, պապական պրոպագանդայի, Հասունյանի և նրա հետևորդների դեմ։ «Պապը,— արձանագրել է թերթը,— յուր աթոռոյն վրա նստած է մեկ ձեռքը խաչ և մյուս ձեռքը թուր բռնած, մեկ ձեռքով քրիստոնեական խաղաղություն կուտա և մյուս ձեռքով մահվան հրամանագիրներ կստորագրե» (№ 444)։ Դրա համար էլ նրա ամենօրյա աղոթքն էր, որ աստված հռոմեա-

դավան հայերին «պապական լուծեն օր առաջ ազատե» (№ 464)։ Մխիթարյանների մշակութային գործունեությունը բարձր գնահատելով հանդերձ, «Արշալույս արարատյանը» կտրուկ դիրք է գրավել նրանց պապական գաղափարաբանության նկատմամբ։ Մեծ ու տևական պայքար է նա մղել հանրահայտ Համազգայց ընկերության պաշտպանության համար, մերկացրել է նրա դեմ հարուցված որոգայթները (№ 257, 310 և հետո)։

Թերթի գաղափարախոսությամբ, ինչպես ամեն մի ազգի, այնպես էլ հայոց «վերանորոգության կամ բարելավության հիմնը» կրթությունը և ուսումն են. «ամբողջ հայ ազգին ապագայն սա բանին հոգատարութենեն կախյալ է», առանց դրան անհնար է առաջադիմել, իսկ «հառաջ չերթալը՝ ետ երթալ է» (№ 512)։ Թե՛ Զմյուռնիայի, թե՛ Կ. Պոլսի ու այլ գաղթօջախներում տեղի ունեցող ներքին պայքարների հանդեպ «Արշալույս արարատյանի» դիրքը լիբերալ-պահպանողական էր գրեթե շուրջ քառասուն տարի։ Նա գտնում էր, որ տարբեր կուսակցություններ, գաղափարներ, կարծիքներ ամեն տեղ էլ կլինեն, «սակայն առաքինությունը միշտ շափավորության մեջ է և ճշմարիտ ազգասիրությունը... կպահանջե, որ փոխադարձ զիջումներ ըլլան բարեմտությամբ ու առանց կրից և յուրաքանչյուր կուսակցություն յուր կարծյացը և դատողությանը վրա համառյալ չմնա։ Այս կերպիվ դյուրին կըլլա շատ գործքերու մեջ տարաձայնությունը անհետ ընել և եղբայրական սիրով ու միաբան հաճությամբ ամեն բան հառաջ տանել շուտով հօգուտ ընդհանուր ազգիս» (№ 533)։

Նպատակի կոնկրետությունը, որ, սակայն, միշտ չէ, որ դրսևորվում էր թերթի էջերում, երբեմն առիթ էր տալիս ավելի սուր կերպով առաջ քաշելու էական հարցերը։ Հենց «ճշմարիտ լուսավորության ցանկալի շավիղով» առաջադիմելու խնդիրը քննելով, թերթը 1857 թ. փետրվարի 8-ի համարում զետեղել է լիովին առաջադիմական ելակետով գրված խմբագրական՝ «Ազգային հառաջադիմություն», ուր նպատակային հարցադրումներով պաշտպանում է լուսավորական-առաջադիմական ձեռնարկումներն ու մամուլը, որոնք հարկավոր աջակցություն չեն ստացել։ Թվարկելով ձեռնարկված մի շարք քայլեր, խմբագրականը նաև կտրուկ արձանագրում է, որ դրանք «դժբախտությամբ առօրյա և ըստ մեծի մասին երևակայական բաներ կթվին մեզ՝ ըստ որում հիմն ի վերա ավազ դրված հաստատություններ միայն տեսած եմք միշտ ազգին մեջ... Ուստի անօգուտ և մանավանդ վտանգավոր կհամարիմք մենք զմեզ խաբել առօրյա հառաջադիմությանց... շափազանց գովասանություններովը։ Արդեն ժամանակը հասած է կարծեմք, եղբայրք, որ պատրանքնիս և ասիական շափազանց ոճերը մեկ կողմ ձգելով, ազգին իսկական վիճակը ճանչնամք և չվախնանք ու չխպնինք հայտնի համարձակ ըսելու, թե տակավին շատ ետ մնացած եմք ըստ ամենայնի մասին» (№ 538, տե՛ս նաև № 564, 565 և հետո)։

Զգուշավորության ու խոհեմության մշտական հորդորները, որ քարոզում էր Ղ. Պալդազարյանը, խանգարում էին նրա թերթին ակտիվ գործունեության մղել ազգային գործիչներին ու հաստատություններին, ստիպում էին մնալ սոսկ արձանագրողի դերում՝ հավատացնելով, թե վաղ կամ ուշ կծագի արշալույսը. «այսօր չե նե անշուշտ օր մը պիտ որ ըլլա այն ցանկալի օրը» (№ 561)։ Համարից համար նման հույսեր ներշնչելով իր ընթերցողներին, «Արշալույս արարատյանը» կույր հավատով ու անքնին է լոսաբանել

նաև արևմտահայ գավառներում բարենորոգումներ կատարելու, ինչպես և մեծ տերությունների արևելյան քաղաքականության հարցերը։ Ըստ որում, նա առանձնահատուկ վերաբերմունք էր դրսևորում Ռուսաստանի «մարդասեր տերության» նկատմամբ, թեև արտաքին քաղաքականության հարցերում երբեք չի հանդգնում շեղվել պաշտոնականից։ Հակադրվելով Ռուսաստանի դեմ առանձին պարբերականների ու գործիչների հարձակումներին, թերթն ընդգծում էր, որ ռուսական տերությունը «փրկեց մեր հայրենիքը արյամբ ոյատերազմի և բյուրավոր դոյաթափ եղած հայոց խղճալի գերդաստաններ ազատեց բռնավոր իշխանությունից... անմարդաբնակ եղած Արարատը վերստին հայ գաղթականով բարգավաճեց», հայությանն իր վաստակը ագատ վայելելու հնարավորություն ընձեռեց (№ 781)։

Առհասարակ «Արշալույս արարատյանի» և նրա խմբագրի դիրքորոշումը Ռուսաստանի հանդեպ արժանի է հատուկ ուշադրության և առանձին քննության։ Որքան էլ արտաքին քաղաքականության հարցերում նրանք չէին կայտղ դուրս դալ պաշտոնական դիրքորոշման օղակից, այսուամենայնիվ, նրանց հայացքը՝ թաքուն կամ ակնառու, դիմաշրջվելով Անգլիայից՝ ուղղվեց դեպի Ռուսաստան։ Այդ դիրքորոշմանը «Արշալույս արարատյանը» հարեց Լրկարատև գաղափարական երկունքով և, անպայման, պատմաշրջանի առաջընթացի անխոտոր թելադրանքով, որի ցցուն ազդարարը եղան ռուս-թուրքական պատերազմը (1877—1878 թթ.) և մի շարք ժողովուրդների ինքնուրույնության հաստատումն՝ «ի շնորհս մեծազոր տերության ռուսաց» (№ 1116)։

Նկատենք նաև մի էական հանգամանք. հաճախ «Արշալույս արարատյանում» հանդիպում են առանձին փաստեր և վկայություններ, որոնք այժմ էլ ինքնին հետաքրքրական են, բայց վրիպել են ուսումնասիրողների ուշադրությունից։ Այսպիսի մի արժեքավոր վկայություն, օրինակ, վերաբերում է Մ. Նալբանդյանին։ Թերթը 1874 թ. հունվար-փետրվարին հրատարակել է Կալկաթայից ստացված նամակ՝ ազգին թողնված կտակների, ինչպես և դրանց շուրջը «Մշակում» լույս տեսած նյութերի մասին։ Նրա հեղինակ Մ. Հովակիմյանը հիշատակում է Աբդալ Մսեհ Բաբաջանի (Համադացվո) կտակը և խոսում «...(ղնահատսէվ) զհավերժական ափսոսանաց արժանին զՄիքայել Նալբանդյանի» ջանքերի մասին՝ այն ձեռք բերելու համար։ Ինչպես նշում է նամակագիրը, Նալբանդյանը կտակի պատճեններ է ստացել նրա եղբորից, որին և հետագայում նամակ է հղել։ «Տեսանեմ աչոք,— գրում է Մ. Հովակիմյանը,— զքառիջյան գրություն նորուն Մ. Նալբանդյանի յԱնդղիո առ եղբայրն իմ (մինչ վերադարձյալ աստեն), որով անկեղծ խոստովանությամբ անբավ պատիվ ջատագովության կրոնասիրության և ազգասիրության ընծայե եղբորս. «գտի զքեզ ասէ ի հոգևորականս՝ այր ըստ սրտի իմում. թող ինձ վերադառնալ ի Նախեջևան, ուր ի դպրատան ի տալ յարուցանել զանդրեն հիշատակի Աբդլ Մսեհ բարերարին՝ քանդակեցից և զանուն ձեր իբրև հեղինակի հարուցման դրամոյս ի բազմամյա մեռելութենե, որպեսզի... քնեածք բացցեն զաչս յուրյանց ի տեսանել և զգալ» և այլն»։ Ցավոք նամակագիրը դրանով ավարտում է Մ. Նալբանդյանի գրությունից քաղվող մեջբերումը (№ 981)։ Հատուկ ուշադրության արժանի այս հաղորդումը և Նալբանդյանից արված մեջբերումը իրավունք են տալիս թերևս ընդլայնելու Նալբանդյանին

աշակցած կալկաթահայերի շրջանակը և մեկով լրացնելու նրա նամակների թիվը։

Վերջապես, պետք է նշել, որ «Արշալույս արարատյանը» որոշակի կայուն ուղեգիծ և նշանարան չունեցավ։ Հրատարակելով իր թերթը, Պալդազարյանը նրա անդրանիկ համարի հայտարարությունում և գրեթե ամենամյա տարելիցային նախարաններում չկարողացավ ձևակերպել այն նշանարանը, որին դավանում է թերթը։ Միայն 1848-ին նա կարծես թե գտավ իր նշանարանը՝ «Հայրենասիրություն, ուսումնասիրություն և միաբանություն» (№ 318), որը, սակայն, մի քանի տարի կրկնելուց հետո, համարյա մոռացավ։ Այլ կերպ էլ լինել չէր կարող. չափից ավելի վերացական ու շատ ընդհանուր էր այդ նշանարանը մի երկշաբաթաթերթի համար։

Ղ. Պալդազարյանը արեց ամեն ինչ իր թերթի գոյությունն ապահովելու և նրան ելակետային դիրքերում պահելու համար։ Անկախ նրա ջանքերից «Արշալույս արարատյանը» նրա իսկ անօրինության ներքո հաճախ է շեղվել պահպանողական ուղեգծից, իսկ 1878 թ. հունիսից հետո մինչև թերթի դադարելը՝ շուրջ յոթ տարի, ընթացավ բոլորովին այլ շավիղով, մի շարք խնդիրներում ցուցաբերեց մարտական դիմադիծ, արծարծեց հրատապ հարցեր, կարելի է ասել ի վերջո փորձեց հանդես գալ առաջադիմական դիրքերից։ «Արշալույս արարատյանը» դադարեց սուլթանական հալածանքների հետևանքով. նրա վերջին խմբագիր Հ. Կ. Սվաճյանը նույնիսկ բանտ նետվեց։

ГУКАС ПАЛДАЗАРЯН И ЕГО ГАЗЕТА «АРШАЛУЙС АРАРАТЯН»

МИКАЕЛ АКОПЯН

Резюме

На протяжении 1840—1878 гг. видный армянский деятель Гукас Палдазарян (1810—1878) издавал в Смирне газету «Արշալույս արարատյան» («Араратские зори»). Имея явно консервативное направление, газета тем не менее играла большую роль в общественной жизни как смирнской, так и других армянских общин. На ее страницах печатались материалы о жизни и деятельности армян в Индии, России, Египте, Персии, особенно Турции и других странах. Газета «Արշալույս արարատյան» представляет большую культурно-историческую ценность в качестве первоисточника.